Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19 -ի N 1230 - Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.Անունը, ազգանունը

Լենա Նանուշյան

2. Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները

2022 թվականի դեկտեմբերի 14-16, Ռուսաստանի Դաշնություն, Սանկտ Պետերբուրգ

4. Հրավիրող կողմը

ՌԴ սպառողների իրավունքների պաշտպանության և մարդու բարեկեցության ոլորտում վերահսկողության դաշնային ծառայություն (Ռոսպոտրեբնադզոր)

5. Գործուղման նպատակը

Մասնակցություն նոր կորոնավիրուսային վարակի (COVID-19) և այլ վարակիչ հիվանդությունների դեմ հակազդման հարցերով 3-րդ Միջազգային գիտագործնական համաժողովին:

6. Քննարկված թեմաները

Համաժողովի հիմնական նպատակն էր ընդհանրացնել նոր կորոնավիրուսային հիվանդության դեմ պայքարի ոլորտում տարբեր առողջապահության կազմակերպիչների, մասնագետների ու գիտնականների

կուտակած գիտելիքներն ու փորձը: Ներկայացվեցին միջազգային համագործակցության արդյունքում համատեղ ձեռքբերումները:

Միջոցառմանը մասնակցում էին ԵԱՏՄ, ԱՊՀ անդամ-պետությունների, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի, Կենտրոնական և Հարավարևմտյան Ասիայի, Արևելյան Եվրոպայի երկրների համապատասխան պետական մարմինների ղեկավարներ, գիտագործնական կազմակերպությունների, ինչպես նաև միջազգային կառույցների ներկայացուցիչներ:

Քննարկվեցին նոր կորոնավիրուսային և այլ վարակիչ հիվանդությունների համաճարակաբանության, վիրուսոլոգիայի, իմունաբանության, լաբորատոր ախտորոշման, պատվաստման հարցերը, վարակի կլինիկական յուրահատկությունները, կանխարգելման ու բուժման հիմնական մոտեցումները, բուժման նպատակով նոր դեղամիջոցների ստեղծման հեռանկարները:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Այցի շրջանակներում տեղի ունեցան հանդիպումներ Ռուսաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Տաջիկստանի, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի, ԱՊՀ գործադիր կոմիտեի ներկայացուցիչների հետ:

Ռոսպոտրեբնադզորի մի քանի գիտահետազոտական ինստիտուտների ներկայացուցիչների հետ քննարկվեցին հետագա համագործակցության հարցեր:

Միջազգային համաժողովին հայկական կողմը ներկայացրեց SARS-CoV-2-ի նկատմամբ ՀՀ բնակչության պոպուլյացիոն իմունիտետի գնահատման առանձնահատկությունները և կազմակերպման մեխանիզմները, Ռոսպոտրեբնադզորի և ՀՀ ԱՆ ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոնի կողմից իրականացվող գիտագործնական համագործակցությունը:

Համաժողովի ավատին կայացավ Արևելյան Եվրոպայի, Կենտրոնական Ասիայի և Անդրկովկասի երկրներում նոր կորոնավիրուսային վարակի դեմ պոպուլյացիոն իմունետետի գնահատման ծրագրի ամփոփում, ներկայացվեցին

վերջինիս շրջանակներում իրականացրած երկամյա համագործակցության արդյունքները, ուրվագծվեցին հետագա փոխգործակցության ուղղությունները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Այցի ընթացքում քննարկվեցին հետագա համագործակցության ուղղությունները, պայմանավորվածություն ձեռք բերվեց խորացնել համագործակցությունը մասնակից երկրների միջև:

9. Առաջարկությունները

Հայաստանյան պատվիրակության անդամները ջանքեր կներդնեն այցի շրջանակներում ստանձնած պարտավորություններն իրականացնելու ուղղությամբ: Երկկողմ հանդիպումների ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց համագործակցող կողմերի միջև ամրապնդել փոխգործակցությունն ու կապերը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

21 դեկտեմբերի 2022 թ.

21.12.2022

X

ԼԵՆԱ ՆԱՆՈՒՇՅԱՆ

Signed by: NANUSHYAN LENA 5114750164